



Տարեկան
հաշվետվություն
2019

Կազմակերպության առաքելությունը

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության նպատակն է բարձացնել հանրության տեղեկացվածության մակարդակը կարևոր հարցերի շուրջ՝ իրազեկելով և նվազեցնելով ապատեղեկատվությունը և դրա ազդեցությունը հանրային կարծիքի ձևավորման և որոշումների կայացման վրա, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների ու բարեփոխումների առաջմղումը:

Մենք կարևորում ենք օբյեկտիվ տեղեկատվության վրա հիմնված հանրային կարծիքի ձևավորումը և որոշումների ընդունումը: Մեր համոզմամբ հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները հիմնականում վերաբերում են արտաքին քաղաքականությանն ու դրան առնչվող հարցերին, ժողովրդավարական արժեքներին, տնտեսությանը, անվտանգության ոլորտին, ընտրություններին, հակակոռուպցիոն և ժողովրդավարական այլ բարեփոխումներին ինչպես նաև որոշ ոլորտներում քաղաքացիների իրավունքներին:

Մեր թիմը աշխատանքներ է ձեռնարկում Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների բարձրացմանն ուղղված, ինչպես նաև իրականացնում լրատվական գործունեություն՝ ապատեղեկատվության դեմ պայքարող «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» իր գործընկերների հետ միասին պայքարում է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման համար՝ թե դիտորդական առաքելության և թե դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով: Մենք նաև ակտիվ մասնակցում ենք մի շարք ժողովրդավարական բարեփոխումների ջատագովությանը, առաջմղմանը, հանրության շրջանում դրանց պահանջի ձևավորմանը և փաստաթղթերի նախագծմանը:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբի շահեր:

Բովանդակություն

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

Աշխատակիցներ



Դանիել Իռաննիսյան
ծրագրերի համակարգող



Աշխեն Մուշեղյան
գործադիր տնօրեն



Փիրուզա Պետրոսյան
գործադիր օգնական



Արևիկ Սիմոնյան
ծրագրի օգնական



Տաթևիկ Թադևոսյան
գործադիր օգնական



Հովսեփ Ղազարյան
ծրագրի օգնական



Վիկտորյա Անդրեասյան
ծրագրի օգնական



Փայլակ Կարապետյան
հաշվապահ



Անի Գրիգորյան
գլխավոր խմբագիր



Սևադա Ղազարյան
լրագրող



Նելլի Ղազարյան
լրագրող



Կարինե Կիրակոսյան
լրագրող



Հովհաննես Նազարեթյան
լրագրող



Մանե Գրիգորյան
սոցիալական մեդիա
մարքեթինգի մասնագետ



Վահե Ղուկասյան
խմբագիր



Խորեն Գրիգորյան
վիդեոմոնտաժող,
օպերատոր



Շուշաննա Վրացյան
հանրային կապերի
համակարգող



Շուշան Հարությունյան
թարգմանիչ



Քրիստինե Գորոյան
թարգմանիչ



Աննա Փամբուխյան
մեդիա մոնիտորինգի
համակարգող



Արեն Մելիքյան
մեդիա մոնիտորինգի
համակարգող



Տաթևիկ Քերոբյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Նանե Մանասյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Արուսիկ Ոսկանյան
մեդիա մոնիտորինգի
մասնագետ



Վահրամ Թոքմաջյան
պատմաբան



Էդգար Հակոբյան
իրավաբան

Գործընկերներ



EASTERN PARTNERSHIP
Civil Society Forum



**National Endowment
for Democracy**
Supporting freedom around the world



**OPEN SOCIETY
FOUNDATIONS**

B | S | T

The Black Sea Trust
for Regional Cooperation

A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND



UNDEF

The United Nations
Democracy Fund



FNUD


Fonds des Nations Unies
pour la démocratie



**EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION**

Պայքար կոռուպցիայի դեմ՝ քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով

«Իրազեկ քաղաքացիների միավորումը»՝ ԱՄՆ դեսպանության աջակցությամբ, իրականացնում է «Պայքար կոռուպցիայի դեմ՝ քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով» ծրագիրը, որի շրջանակներում ստեղծվել է Umdimel.am կայքը: Կայքում հանրամատչելի կերպով ներկայացված են տարբեր իրավիճակներում հայտնված քաղաքացիների համար նախատեսված խորհուրդներ, որոնք միտված են բարձրացնելու քաղաքացիների իրազեկվածությունը և կանխելու կոռուպցիոն ռիսկերը մի շարք հանրային ոլորտներում: Քաղաքացիները կայքում կարող են գտնել շուրջ 100 թեմատիկ հարցադրումներ և պատասխաններ, որոնք ընդգրկում են իրականացվելիք քայլերի հերթականությունը և անհրաժեշտ փաստաթղթերը: Ներկայացված է ոլորտների բավականին լայն շրջանակ՝ ոստիկանություն, ճանապարհային ոստիկանություն, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, հանրային ծառայությունների ոլորտ, դատարաններ, քննչական մարմիններ, առողջապահություն, կրթություն, զինված ուժեր, սննդամթերքի անվտանգություն, սպառողների իրավունքներ, ընտրություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, բանկային և ֆինանսական մարմիններ, մաքսային և հարկային մարմիններ, անձնական տվյալների պաշտպանություն, ընտանեկան բռնություն, տեղեկատվության ազատություն, քաղաքաշինություն, աշխատանքային իրավունք և լրատվամիջոցներ:



Մասնակցություն ընտրություններին



2019թ.սեպտեմբերի 8-ին «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակի» հետ համատեղ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» իրականացրեց կարճաժամկետ դիտորդական առաքելություն՝ դիտարկելով Արցախի ՏԻՄ ընտրությունները: Առաքելության շրջանակում իրականացվել է մեդիա մոնիթորինգ, որի ժամանակ դիտարկվել է թեկնածուների լուսաբանումն Արցախի հանրային հեռուստաընկերությամբ և առցանց լրատվամիջոցներով: Մեդիա մշտադիտարկումն իրականացվել է օգոստոսի 15-ից սեպտեմբերի 9-ն ընկած

ժամանակահատվածում՝ երկու մշտադիտարկողի կողմից: Առաքելության ավարտին ներկայացվել է ամփոփիչ զեկույց:


Ընտրություններին ընդառաջ «Իրազեկ քաղաքացիների միավորման» ծրագրերի համակարգող Դանիել Իօաննիսյանի ղեկավարած պատվիրակության ներկայացուցիչները Արցախում հանդիպումներ են ունեցել ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանի, արդարադատության նախարար Արարատ Դանիելյանի, մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանի, հանրային հեռուստաալիքի՝ Արցախ TV-ի նախագահ Արսեն Առուստամյանի, Ոստիկանության և ԿԸՀ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև տեղի քաղաքացիական ակտիվիստների հետ:

Մասնակցությունը հակակոռուպցիոն ռեֆորմին

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն 2019 թվականից ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում հակակոռուպցիոն ռեֆորմների մշակման գործընթացում: Մասնավորապես, հուլիս ամսից կազմակերպությունը մաս է կազմում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին, որի շրջանակներում ներկայացվել են բազում առաջարկներ, որոնք հետագայում ընդունվել և ապա իմպլեմենտացվել են:

Քաղաքացիական կրթություն

«Իրազեկ քաղաքացիների միավորումը»՝ «Բաց հասարակության հիմնադրամների» և Գերմանական Մարշալ ֆոնդի սնծովյան հիմնադրամի աջակցությամբ իրականացված ծրագրերի շրջանակներում պատրաստել է ընտրությունների վերաբերյալ քաղաքացիներին իրազեկող և կրթող հոլովակներ: Դրանք վերաբերել են թե Հայաստանում ընթացքող բարեփոխումներին, թե բարեփոխումների հանրային պահանջի ձևավորմանը և թե մեղիագրագիտությանը: Հոլովակները հեռարձակվել են տեղական, մարզային և համապետական հեռուստաալիքներով, ինչպես նաև «Իրազեկ քաղաքացիների միավորման» Youtube-ի ալիքում և տարածվել սոցիալական ցանցերում:



Լրագրողների ուսուցում

Դրական փոփոխություն քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով



Այս ծրագրի շրջանակներում կազմակերպվել են թրեյնինգներ 50 լրագրողների համար քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում մոնիտորինգի և ջատագովության թեմաներով և տրամադրվել դրամաշնորհներ լրագրողների վեց խմբերի՝ այս երեք ոլորտներում հետաքննություն անցկացնելու նպատակով: Ծրագրի շրջանակներում նաև կազմակերպվել են թրեյնինգներ 75 երիտասարդական ակտիվիստների համար՝ երեք թեմատիկ ոլորտներում հմտություններ ձեռք բերելու, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մոնիտորինգի և շահերի ջատագովության մեջ ներգրավված լինելու նպատակով:

Ծրագրի սահմաններում 8 երիտասարդական և նույնքան լրագրողական թիմերի տրվել են ենթադրամաշնորհներ՝ համապատասխանաբար մոտ 10 և 17 միլիոն դրամի չափով: Հաշվետու տարվա դեկտեմբերին ավարտված այս ծրագիրը ֆինանսավորվում էր Եվրոպական միության կողմից և իրականացվում է «ԲՀՀ-Հայաստան» և «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ների հետ համատեղ:

Փաստերի ստուգման ամառային դպրոց

Նպատակ ունենալով կեղծ լուրերի տարածումը կանխելու, դրանց տարածման պարագայում էլ ապատեղեկատվության տարածմանը հակազդելու՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» իրականացրեց կրթական ծրագիր, որի նպատակն էր գործնականում զարգացնել սկսնակ լրագրողների՝ փաստերի ստուգման հետ աշխատելու կարողությունները: Սույն ծրագրին մասնակցեցին փաստերի ստուգման ոլորտում իրենց առաջին քայլերն անող հինգ սկսնակ լրագրողներ: Նրանք գործնականում զբաղվեցին փաստերի ստուգմամբ և հայաստանյան մեդիադաշտում ապատեղեկատվության տարածման հակազդեցությամբ: Երկամսյա ուսումնական խմբագրությունում լրագրողների համար կազմակերպվեցին նաև դասեր փաստերի ստուգման ժամանակակից գործիքների, տեղեկատվության ազատության, տեղեկատվության ստացման հարցումների, խոսքի ու տվյալների, վիճակագրության, վարկանիշի սխալ մեկնաբանման, պետական գնումների ոլորտի և պետական բյուջեի վերահսկողության, տեղորոշման (geolocation), վիճակագրական տվյալների ուսումնասիրության, լուսանկարների և տեսանյութերի ստուգման, աղբյուրների հայտնաբերման, տվյալների պահպանման և վիզուալիզացիայի, մեդիայի մշտադիտարկման եղանակների, բաց տվյալներից, իրավական ակտերից, դատական բազաներից, հայտարարագրերից օգտվելու, լրագրողական էթիկայի կանոնները պահպանելու վերաբերյալ:

Ուսումնական խմբագրության բոլոր անդամներն ուսումնառության և գործնականում FIP.am-ում աշխատանքի համար կազմակերպության կողմից ապահովվեցին ամբողջական կրթաթոշակով:

Ամենօրյա ռեժիմով սկսնակ լրագրողները գործնական ներգրավվածություն ունեին Փաստերի ստուգման հարթակի աշխատանքին, ինչի նպաստեց նրանց մասնագիտական կարողությունների և հմտությունների, ինչպես նաև վերլուծական ունակությունների զարգացմանը: Ամառային դպրոցի ընթացքում ձեռք բերված գիտելիքների կիրառմամբ ավելի քան 25 հրապարակում տեղ գտավ Փաստերի ստուգման հարթակում:

Ծրագրի շրջանակում անցվեցին թարգմանվեցին և դպրոցի մասնակիցների համար հայերենով ստեղծվեցին փաստերի ստուգմանը, մեդիագրագիտությանն ուղղված մի քանի տեսանյութեր, որոնք հետագայում կարող են կիրառվել՝ նպաստելով լրագրողների՝ փաստերի ստուգման վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմանը: Բացի այդ, ստեղծվեց փաստաթուղթ-ուղեցույց, թե ինչպես է պետք գրել լրագրողական հրապարակումը, եթե այն առնչվում է փաստերի ստուգմանը կամ հակազդում է ապատեղեկատվությանը:

Watchdog լրագրության իրթանումը Հայաստանում



Խելացի որոնում համացանցում

Համացանցում որոնում կատարելու հսկողություններ խիստ անիդաժեշտ են հեռացնելու քաղաքական համար, քանի որ հաճախ հեռացրոգրություն ներկայացվող անձինք ու Լրանց երկխառնել իրենց ճիշտ ու հաջողակ կյանքի կ ջույց են դնում համացանցում: Այս դասում Բանադաքեք իրացիոն որոնման գործիքներին Google-ում և անցանցներում:



Ինչպես կարդալ ֆինանսական
հաշվետվությունները

Հասնակակցի ընկերությունների ֆինանսական հոսքերն ավելիված են ընկերությունների ֆինանսական հաշվառվությունում: Որոշի հաճախ կարող եղ գտնել տեղեկություններ ու ապացույցներ կազմակերպությունների իրական սեփականատերերի ու կապաճեծի ֆինանսական գործաղջների մասին:



Ինչպես ստանալ տեղեկատվություն
պետական մարմիններից

Օրենքով հասանելի տեղեկատվությունը պետական մարմիններից ստանալու հաճաք եղբան ակնարկաբեր է լինում հարցախաղի որոշակի խոչընդոտներ, ծախսեր երկար ժամանակ, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Այս դրամով ծանրագույն տեղեկատվություն ստանալու հիմնական սկզբունցներին:



2018 թ. ապրիլին ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամի ֆինանսավորմամբ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» մեկնարկել է երկուս ու կես տարի տևողությամբ ծրագիր, որը նպատակ ունի հետաքրքրություն առաջացնել Հայաստանում վոչդոգ լրագրության նկատմամբ և դրանով բարձրացնել հանրային վերահսկողությունը կառավարման մարմինների նկատմամբ: «Վոչդոգ լրագրության խթանումը Հայաստանում» ծրագրի հիմնական շահառուներն են լրագրողները, ուսանողները և ակտիվ քաղաքացիները:

Ծրագրի շրջանակում մշակվել է առցանց դասընթաց՝ բաղկացած 12 տեսադասերից և յուրաքանչյուրին կից հարցաշարից: Հետաքննական լրագրության առանցքային գործիքներին և հմտություններին ծանոթացնող թեմաները կազմվել են ոլորտում փորձառու 9 հայ և 3 միջազգային փորձագետների կողմից, այնուհետև դրանք անիմացվել են և վերածվել տեսանյութերի՝ դասընթացն առավել ինտերակտիվ դարձնելու համար: Դասընթացի համար մշակվել է առանձին կայք (course.uic.am), որը պաշտոնապես գործարկվել է 2018 թ. դեկտեմբերի վերջին:

2019թ.-ին ծրագրի շրջանակում իրականացվել է 5 երկօրյա թրեյնինգ/վորքշոփ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել է 148 լրագրող և ակտիվիստ: Դասընթացները վարել են հայկական մեդիա դաշտում փորձառու մասնագետները, ինչպես նաև հրավիրվել է 5 միջազգային փորձագետ այդ թվում Սերբիայից, Ուկրաինայից և «Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի ուսումնասիրության նախագծի» (OCCRP) ներկայացուցիչներ:

Դասընթացների մասնակիցներից 8 լրագրողական խմբեր ստացել են ենթադրամաշնորհներ իրենց հետաքննական նախագծերի իրականացման համար (գումարային՝ մոտ 10 միլիոն դրամի չափով): Բացի այդ, ծրագրի շահառուներին հնարավորություն է տրվել ծրագրի շրջանակում գրել և հրապարակել հետաքննական և ֆաքթ-չեք հոդվածներ: Նախատեսվում է, որ ծրագիրը կնպաստի Հայաստանում հետաքննական հոդվածների ավելացմանը, լրագրողների կողմից հետաքննությունների կարևորմանը և հետևապես՝ հանրային վերահսկողության բարձրացմանը:



Արտաքին քաղաքականություն և լուսաբանում



2019 թվականի ընթացքում կայացան արդեն ավանդական դարձած «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում խորագրով» սեմինարները:

Ապրիլ ամսին տեղի ունեցավ ԵԱՏՄ տնտեսական մարտահրավերները» խորագրով սեմինարը՝ լրագրողների համար: Միջոցառման ընթացքում զեկույցներով հանդես եկան Գործատուների միության նախագահ Գագիկ Մակարյանը, «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ նախագահ Բաբկեն Պիպոյանը, Դանիել Իոաննիսյանը, տնտեսագետներ Թաթուլ Մանասերյանը և Վահագն Խաչատուրյանը, ինչպես նաև Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանը:

Մատնանշվեցին ԵԱՏՄ անդամակցությունից հետո Հայաստանի առջև ծառացած մարտահրավերները և քննարկվեցին դրանք հաղթահարելու ուղիները:

Հատուկ անդրադարձ եղավ 2020 թվականից մի շարք ներկրվող ապրանքատեսակների համար բարձրացվող մաքսատուրքերի խնդրին: Միջոցառման մասնակիցները հնարավորություն ստացան ԵԱՏՄ վերաբերյալ իրենց հուզող հարցերն ուղղել ոլորտի մասնագետներին և պատասխանատուներին:





Դեկտեմբերի 14-15-ին Ադվերանում կայացավ այս շաբթի 9-րդ սեմինար-քննարկումը: Միջոցառման թեմատիկ ուղղությունը Արցախյան հակամարտությունն էր: Բանախոսությամբ հանդես եկան Արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, «Անի» կենտրոնի համակարգող և Միվիլների լրագրող Թաթուլ Հակոբյանը, Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի ղեկավար Ստյոպա Սաֆարյանը, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի գիտական ղեկավար Մանվել Սարգսյանը և ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Հովհաննես Իգիթյանը:

Ինչպես նախկինում, այնպես էլ այս անգամ պաշտոնյաների հետ քննարկումները եղել են «Chatham House» կամ «off-the-record» ձևաչափով, քանի որ միջոցառման նպատակը զուտ լրագրողների մասնագիտական հմտությունների զարգացումն է և ոչ մամուլի ասուլիս կազմակերպելը:

Բանախոսները մասնակիցներին են ներկայացրել Արցախյան հակամարտության պատմությունը, ընթացիկ զարգացումները, կոնֆլիկտի միջազգային քարտեզագրման վերաբերյալ գիտելիքներ, ներկայացրել են պաշտոնական մոտեցումները և այլ՝ Ղարաբաղյան հակամարտության լուսաբանման համար կարևոր հմտություններ:



Այս սեմինար-քննարկումները նպատակ ունեն բարձրացնել լրագրողների մասնագիտական հմտություններն արտաքին քաղաքականության լուսաբանման ոլորտում: Միջոցառմանը ղեկույցով հանդես են գալիս Հայաստանում ներկայացված օտարերկրյա դեսպաններ, ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձինք և ոլորտի առաջատար փորձագետներ:



Հանրային քննարկումներ



Ապրիլի 3-ին ԵՊՀ 7-րդ մասնաշենքի Չարենցի անվան դահլիճում տեղի ունեցավ «Կառավարության կառուցվածքի նախագիծն ու ժողովրդավարությունը» խորագրով հանրային քննարկումը, որի ընթացքում իրենց տեսակետներով հանդես եկան խորհրդարանական տարբեր ուժեր ներկայացնող պատգամավորներ, մասնավորապես Վահագն Հովակիմյանը և Արտակ Մանուկյանը՝ «Իմ քայլը» դաշինքից, Էդմոն Մարությանը՝ «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից, Գևորգ Պետրոսյանը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից, կառավարման փորձագետ Հարություն Մեսրոպյանը, ինչպես նաև

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Միջոցառումանը ներկա էին ուսանողներ, ովքեր բանախոսներին հարցեր ուղղելու հնարավորություն ունեցան:





Ապրիլի 30-ին կայացավ «ԵԱՏՄ մարտահրավերները. մաքսային նոր դրույքաչափեր» խորագրով հանրային քննարկումը: Իրենց տեսակետներով հանդես եկան ԱԺ պատգամավորներ Արմեն Եղիազարյանը՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունից, Արմեն Փամբուխյանը՝ «Իմ քայլը» խմբակցությունից, տնտեսագետ Վահագն Խաչատուրյանը և Դանիել Իոաննիսյանը:

Նոյեմբերի 16-ին տեղի ունեցավ «Սահմանադրական դատարանի շուրջ ստեղծված իրավիճակը և լեգիտիմության խնդիրները» թեմայով

հանրային քննարկումը, որին մասնակցում էին ՀՀ ԱԺ պատգամավոր, «Իմ քայլը» խմբակցության անդամ Սիսակ Գաբրիելյանը, ՀՀ ԱԺ անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանը, Սահմանադրական դատարանի անդամ Ալվինա Գյուլումյանը, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» ղեկավար, իրավապաշտպան Արթուր Սաքունցը և «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը:

Մեդիայի սպառման և մեդիագրագիտության մասին սոցիալացում



2019 թ. հունիսին «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ի կողմից տրամադրված ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (այսուհետ՝ APR Group) հասարակական կազմակերպության կողմից իրականացվեց քանակական սոցիոլոգիական հարցում ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրվեցին բնակչության հիմնական տեղեկատվության աղբյուրները, դրանց հանդեպ մարդկանց վստահությունը և նրանց կողմից տվյալների տարածումն և ստուգման ձևերը: Բոլոր տվյալները դիտարկվել են ոչ միայն ըստ սոցիալական, սեռատարիքային և այլ խմբերի, այլև ըստ մարդկանց քաղաքական կողմնորոշումների՝ հասկանալու համար, թե արդյո՞ք մեդիագրագիտությունն ունի փոխկախվածություն քաղաքական հայացքներից:

Հարցվածները տեղեկատվության առավել շատ վստահելի աղբյուր էին համարում ընտանիքը, ապա ռադիոն (նվազման կարգով), հեռուստատեսությունը և պաշտոնյաների լայվերը:

Ամենաանվստահելի տեղեկատվության աղբյուր են համարվում հարևանները, որոնց հաջորդում են սոցիալական ցանցերը: Հարցման կարևորագույն բաղադրիչներից էր մեդիագրագիտությունը: Հայաստանցիների 29%-ն ընդունում է, որ երբեք չի ստուգում ստացած տեղեկությունները, իսկ 40 տոկոսը դա անում է միայն երբեմն:



Փաստերի ստուգման լրագրության զարգացումը Հայաստանում



2019 թվականին «Փաստերի ստուգման հարթակը» (Fip.am) շարունակեց իր առաքելության և նպատակների իրականացումը, այն է՝ ապատեղեկատվության, կեղծ ու մանիպուլյատիվ տեղեկությունների դեմ պայքարը: Ընդլայնվեց հարթակի գործունեության շրջանակը: Նախորդ տարի կայքում հրապարակվել է 388 հոդված, որոնք ունեցել են միջինում 5600 դիտում:

2018 թ. ապրիլ-մայիսյան հեղափոխությունից հետո Հայաստանի մեդիադաշտը էական փոփոխությունների է ենթարկվել: Նախկին ու ներկա իշխանությունների տրամադրության տակ գտնվող լրատվամիջոցները,

վարելով տեղեկատվական պատերազմ, առավել ակտիվ են դաշտ նետում տարաբնույթ կեղծ կամ մանիպուլյատիվ տեղեկություններ, որոնք առավել օպերատիվ հայտնաբերելու, ստուգելու և հանրությանը տեղեկացնելու նպատակով էլ «Փաստերի ստուգման հարթակն» ընդլայնել է իր թիմը:

Հարթակի գործունեության շրջանակի ընդլայնմանը զուգընթաց՝ Fip.am-ում կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում կայքը դարձել է առավել ինտերակտիվ, ընթերցողի համար դյուրամատչելի: Ներդրվել է նյութերը գնահատելու հատուկ համակարգ, որը համապատասխանում է փաստերի ստուգման միջազգային չափանիշներին: Բացի փաստերի ստուգումից, հարթակը նախորդ տարի գործուն քայլեր է իրականացրել հետաքննական լրագրության բաղադրիչն ավելացնելու ուղղությամբ: Հրապարակվել են տասնյակից ավել հետաքննություններ, որոնք մեծ արձագանք են ստացել հանրության շրջանում:

Հայաստանում փաստերի ստուգման լրագրությունը զարգացնելու նպատակով նախորդ տարի հարթակը կազմակերպել է երկամսյա ամառային դպրոց՝ փաստերի ստուգման և ապատեղեկատվության տարածման հակազդեցության վերաբերյալ: Դպրոցի ուսումնառուներից հինգը փաստերի ստուգման գործնական հմտություններ են ձեռք բերել ոլորտում աշխատող պրոֆեսիոնալներից, իսկ ուսումնառուներից մեկը ներկայում աշխատում է «Փաստերի ստուգման հարթակում»:

Հարթակի գործունեության շնորհիվ յուրաքանչյուր օր ինտերնետ օգտատերերի կողմից ստանում ենք բազմաթիվ նամակներ այս կամ այն թեմայի վերաբերյալ փաստերը ստուգելու կամ տեղեկությունը ճշտելու վերաբերյալ: Էականորեն ավելացել է հարթակի ճանաչելիությունը հանրության շրջանում:

Նախորդ տարվա ընթացքում մի քանի անգամ Ազգային ժողովի պատգամավորները հարցեր են ուղղել կառավարության անդամներին, որոնց հիմքում եղել են հենց Fip.am կայքի հրապարակումները:

Այս ամենին զուգահեռ՝ Fip.am-ը շարունակել է իրականացնել փաստերի ստուգման իր գործառույթը՝ վեր հանելով կեղծ տեղեկատվությունը, պաշտոնյաների ունեցվածքների վերաբերյալ կեղծ հայտարարագրերը՝ ներկայացնելով նախկին պաշտոնյաների բիզնեսների վերաբերյալ կատարված հետաքննությունները: Fip.am-ի հրապարակումների հիման վրա իրավապահ մարմինների կողմից հարուցվել են քրեական գործեր, պաշտոնյաների նկատմամբ կիրառվել են տարբեր վարչական տույժեր: «Փաստերի ստուգման հարթակի» հրապարակումներն արտատպել և վերահրապարակել են տարբեր լրատվական կայքեր, պաշտոնյաները մեր հրապարակումների վերաբերյալ հանդես են եկել պարզաբանումներով, իսկ փաստերի ստուգման թիմի անդամները մասնակցել են տարբեր հաղորդումների և իրենց կատարած հետաքննությունների վերաբերյալ մեկնաբանություններ տվել տարբեր լրատվական կայքերի:

Մեղիա մշտադիտարկում

Մշտադիտարկման նպատակն էր ուսումնասիրել հայաստանյան մեղիայում հակաժողովրդավարական պրոպագանդան և ապատեղեկատվության տարածումը: Ամենօրյա կտրվածքով մշտադիտարկման են ենթարկվել վերգետնյա հեռուստաալիքները, տպագիր մամուլը, առցանց լրատվամիջոցները և սոցիալական ցանցերը՝ այնտեղ հանդիպող ապատեղեկատվություններն ու կեղծ լուրերը հայտնաբերելու և դրանց արագ արձագանքելու համար:

Բացի այդ, առանձնակի ուշադրության տակ են պահվել լրատվամիջոցներում և սոցիալական մեղիայում տարածվող մանիպուլյացիաներն ու քարոզչական թեզերը: Հրապարակվել է այդ թեզերն ամփոփող մեկ զեկույց, որտեղ ներկայացվել են քարոզչության տարածման մեխանիզմները:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը»՝ միջազգային մրցանակի դափնեկիր





2019թ.-ին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» արժանացավ ԵԱՀԿ-ում 36 երկրների ներկայացուցչությունների կողմից տրվող Ժողովրդավարության պաշտպանի մրցանակին, որը շնորհվում է անձի կամ խմբի՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի և այլ ԵԱՀԿ սկզբունքների և պարտավորությունների ոգուն համահունչ ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության խթանման գործում ունեցած ավանդի համար: Ինչպես նշեց ԵԱՀԿ-ում Շվեդիայի մշտական ներկայացուցիչ՝ դեսպան Ուլրիկա Ֆուներեդին իր ելույթում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն արժանացավ մրցանակին «անկախ լրագրության և իրազեկ որոշումների կայացման խթանման, ինչպես նաև Հայաստանում ընտրությունների մշտադիտարկման ամրապնդման գործում ունեցած ակնառու ավանդի համար»:

Մրցանակի շնորհման արարողությունը տեղի ունեցավ մարտի 11-ին՝ Վիեննայում Շվեդիայի դեսպանատանը: Արարողությանը ներկա էին ԵԱՀԿ-ում տասնյակ երկրների դեսպաններ, այլ դիվանագետներ, միջազգային ճանաչմամբ հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Մրցանակը «Իրազեկ քաղաքացիների միավորման» ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանին հանձնեց ԵԱՀԿ-ում Շվեյցարիայի դեսպան Կլոդ Վիլդը:

Ժողովրդավարության պաշտպանի ամենամյա մրցանակաբաշխությունը հիմնվել է 2016 թվականին ԵԱՀԿ-ում 8 երկրների՝ Կանադայի, Դանիայի, Մոնտենեգրոյի, Նիդերլանդների, Շվեդիայի, Շվեյցարիայի, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների ներկայացուցչությունների կողմից, ավելի ուշ դրան են միացել ևս 28 երկրների պատվիրակություններ, այդ թվում Հայաստանը: Մրցանակը շնորհվում է որպես գնահատական քաղաքացիական հասարակության կողմից տարածաշրջանում ժողովրդավարության խթանմանն ուղղված աշխատանքներին:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» նշեց իր 5-ամյակը



Ապրիլի 5-ին «Թուֆենկյան ավանդական Երևան» հյուրանոցում կայացավ «Իրազեկ քաղաքացիների միավորման» 5-ամյակին նվիրված միջոցառումը:

Տարեդարձի հանդիսավոր արարողության ընթացքում ներկայացվեցին վերջին հինգ տարիների ընթացքում կազմակերպության անցած ճանապարհին ու գրանցած հաջողությունները, անդրադարձ կատարվեց կազմակերպության իրականացրած ծրագրերին, ինչպես նաև ներկայացվեց կազմակերպության նոր նախագիծը՝ umdimel.am կայքը:

Նոր նախագծի նպատակը ծագած տարաբնույթ հարցերում քաղաքացիներին օգնելն ու հուշելն է, թե ինչպես և ում պետք է դիմել խնդրահարույց իրավիճակներում:

Միջոցառմանը ներկա էին հայաստանյան քաղիասարակության անդամներ, Ազգային ժողովի պատգամավորներ, օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ և «Իրազեկ քաղաքացիների միավորման» բազմաթիվ գործընկերներ:



Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

N 2019թ. ֆինանսական միջոցները՝ ըստ դոնորների		USD	
1	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	Բալանս	12809.98
		Եկամուտ	146932.00
2	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	15542.61
		Եկամուտ	105500.00
3	Եվրոպական հանձնաժողով, Բրյուսել	Բալանս	43588.77
		Եկամուտ	86164.73
4	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	Բալանս	4788.28
		Եկամուտ	9990.00
5	ՄԱԿ-ի ժողովրդավարության հիմնադրամ, Նյու-Յորք	Բալանս	5460.58
		Եկամուտ	82040.00
6	Տարածաշրջանային համագործակցության սեւծովյան հիմնադրամ, Բուխարեստ	Բալանս	24114.29
		Եկամուտ	0.00
7	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	405.84
		Եկամուտ	29966.00
8	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	0.00
		Եկամուտ	13841.82
9	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, Երևան	Բալանս	0.00
		Եկամուտ	5252.76
10	Այլ մուտքեր (դատական ծախսերի փոխհատուցում)	Բալանս	0.00
		Եկամուտ	352.99
			586751

N	2019թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		USD
1	Արտաքին քաղաքականության շուրջ հանրային քննարկումներ	Ծախսեր	121034.32
2	Հայաստանում պրոպագանդայի և ապատեղեկատվության օբյեկտիվ ընկալման ձևավորում և դրանց ազդեցության նվազեցում	Ծախսեր	102270.19
3	Դրական փոփոխություն քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով	Ծախսեր	129753.50
4	Պայքար կոռուպցիայի դեմ քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով	Ծախսեր	14778.28
5	Watchdog լրագրության խթանումը Հայաստանում	Ծախսեր	62071.01
6	Խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության բարձրացում և բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	Ծախսեր	24114.29
7	Տեղեկատվական միջավայրի պաշտպանությունը մանիպուլյացիայից և ապատեղեկատվությունից արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ	Ծախսեր	28316.95
8	Փաստերի ստուգման եւ մեղիա մոնիտորինգի կարողությունների հզորացում	Ծախսեր	9950.12
9	Փաստերի ստուգման ուսումնական խմբագրություն	Ծախսեր	5252.76
10	Այլ	Ծախսեր	1360.48
			498902